Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Նոր ուղու միջնակարգ դպրոց

Թեմա՝ «Մայրենի 4» դասագրքի նյութերը իբրև դատողական և գնահատող խոսք կառուցելու կարողության ձևավորման միջոց

Վերապատրաստող, մենթոր՝ Զարոյան Մ.

Ուսուցիչ՝ Գրիգորյան Էլինա

Արարատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.

ԴԱՏՈՂԱԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. Դատողական և գնահատող խոսքի դերը տարրական դպրոցում..... 4

1.2. Դատողական և գնահատողական խոսքի զարգացումը տարաբնույթ առաջադրանքների

միջոցով.....6

ԳԼՈՒԽ 2.

«ՄԱՅՐԵՆԻ 4» ԴԱՍԱԳՐՔԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԻԲՐԵՎ ԴԱՏՈՂԱԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

3.1. Գնահատողական և դատողական խոսքի ձևավորումը «Մայրենի 4» դասագրքի նյութերի ուսումնասիրության ընթացքում..... 7

3.2. Փորձարարական աշխատանքի ընթացքը և արդյունքները.....12

3.3. Դասավանդման մեր փորձից 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական գործունեության ընթացքում նկատել ենք, որ մայրենիի դասաժամերին ուսուցիչները ձգտում են տարբեր աշխատանքների միջոցով զարգացնել կրտսեր դպրոցականի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսք ձևավորելու և զարգացնելու կարողությունն ու հմտությունը, սակայն կրտսեր դպրոցականները հաճախ դժվարանում են ոչ միայն ընթերցել ու վերարտադրել դասագրքերում ներառված բնագրերի պատմողական, նկարագրական հատվածները, այլև կառուցել դատողական և գնահատողական խոսք ընթերցված բնագրի վերաբերյալ:

Թեմայի արդիականությունը

Այժմյան կրթահամակարգի առաջին օղակը կազմող տարրական դպրոցի մայրենիի դասավանդման հիմնական նպատակներից մեկը կրտսեր դպրոցականների կապակցված, գրագետ և բովանդակալից խոսքի զարգացումն է, քանի որ առանց խոսքի հնարավոր չէ կրթել սերունդներին, նրանց հաղորդակից դարձնել ազգային ու համամարդկային արժեքներին: Այս համատեքստում դպրոցի կարևորագույն խնդիրներից եղել և մնում է աշակերտների դատողական և գնահատողական խոսք կառուցելու հմտության ձևավորումը, որն էլ կազմում է մեր թեմայի արդիականության հիմքը:

Հետազոտության նպատակը

Աշխատանքի նպատակը տարրական դպրոցում գնահատողական և դատողական խոսքի դերի ու նշանակության կարևորումն է, «Մայրենի 4» դասագրքի նյութերի միջոցով աշակերտների գնահատողական և դատողական խոսքի նոր կարողությունների ձևավորումն ու բառապաշարի հարստացումը, ինչպես նաև դպրոցականների՝ ինքնուրույն հետազոտություն, վերլուծություն անելու կարողությունների զարգացմանը միտված մեթոդական ցուցումների համակարգի մշակումը:

Հետազոտման խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն,

2. ուսումնասիրել «Մայրենի 4» դասագրքերի կառուցվածքը, բովանդակությունը, ծրագիրը , մեթոդական կառույցը,
3. մշակել և կիրառել որոշակի մեթոդներ կրտսեր դպրոցականի գնահատողական և դատողական խոսքը զարգացնելու ուղղությամբ,
4. պարզաբանել կրտսեր դպրոցականի բառապաշարի առանձնահատկությունները, տարաբնույթ առաջադրանքների դերը գնահատողական և դատողական խոսք կառուցելու գործում,

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է էջ:

ԳԼՈՒԽ 1.

ԴԱՏՈՂԱԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1.Դատողական և գնահատող խոսքի դերը տարրական դպրոցում

Դեռ այբբենական շրջանում հատուկ ընտրված նկարների, բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված նյութերի, էքսկուրսիաների, զննական նյութերի և այլ միջոցներով աշակերտները տարրական տեղեկություններ են ստանում աշխարհի, շրջապատի, մարդկանց, աշխատանքի և այլ երևույթների վերաբերյալ:

Դատողական և գնահատող խոսքի զարգացման և կատարելագործման համար կարևոր նշանակություն ունի հարուստ բառապաշարը, որի հարստացման և կատարելագործման համար հարկավոր են մի շարք պայմաններ: Դրանցից են՝

1. ուսուցչի գրագետ խոսքը,
2. գրքի տեքստերը, դրանց շուրջ կատարվող աշխատանքը:
3. պայմանների և միջավայրի ստեղծումը, որտեղ երեխան կունենա խոսելու և գրելու պահանջ (էքսկուրսիաներ, խաղեր, պատմողական խոսք, նկարագրական խոսք, դատողական խոսք, գնահատող խոսքի կազմակերպում, դերային ներկայացումներ),
4. Հատուկ բառապաշարի կուտակում ընթերացանության միջոցով:

Խոսքի այս երկու տեսակների զարգացման համակարգում առանձահատուկ տեղ են զբաղեցնում մայրենիի դասաժամերին իրականացվող աշխատանքները՝ հատկապես բառային աշխատանքը, որի հիմնական նպատակը բառապաշարի հարստացումն է: Դատողական և գնահատող խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր նշանակություն ունի բառակապակցությունների ու նախադասությունների հետ կատարվող աշխատանքը: Բառակապակցությունների կազմումը բառերի կապակցմամբ, դրանց միջև իմաստային կապեր հաստատելու հատկանիշը առարկային վերագրելու ամենապարզ ձևն է: Այն անփոխարինելի ու

առանձնահատուկ դեր ունի ոչ միայն խոսքի գեղեցկացման համար, այլև խոսքի մեջ դատողական և գնահատող իմաստների ներկայացման առումով:

Ինչպես բառակապակցություն, այնպես էլ նախադասություն կազմելու շուրջ կատարվող աշխատանքը գնահատող և դատողական խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունի: Նախադասությունը խոսքի ամենափոքր միավորն է, որի մեջ բառերը դեմքով, թվով և այլ քերականական հատկանիշներով և գործողությամբ են կապակցության մեջ մտնում:

Դատողական և գնահատող խոսք կառուցելու կարողության զարգացմանը մեծապես նպաստում են դասագրքերում առկա թեմատիկ նկարների շուրջ պատմությունների ստեղծումը և վերարտադրումը: Բնագրի շուրջ աշխատելիս աշակերտներին պետք է ուղղորդել դատողական և գնահատող խոսք կառուցելու՝ համապատասխան խոսքային կաղապարներ: Օրինակ՝

Նա բարի է (չար է), …… քանի որ …… :

Նա չցանկացավ, այդ պատճառով էլ……...:

Նրա այդ արարքը ես բարձր եմ գնահատում, քանի որ.....:

Ես ընտրում է այս հերոսին, որովհետև....., և այլն:

Դատողական և գնահատող խոսք կառուցելու կարողության ձևավորման վրա բացառիկ ազդեցություն է ունենում բանավեճերի կազմակերպումը: Գիտելիքների փոխանակումն օգնում է աշակերտների հայացքների փոխանակման ու փոփոխմանը, նոր դատողությունների ձևավորման:

Դատողական և գնահատող խոսքի զարգացմանը ակտիվ կերպով նպաստում է ուսումնական երկխոսությունը, որի մեջ հայտվում է աշակերտը. այն կարող է լինել ինչպես ուսուցչի, այնպես էլ համադասարանցիների հետ:

Դատողական և գնահատող խոսքի զարգացման գործում մեծ դեր ունեն առածներն ու ասացվածքները: Վերջիններս մայրենիի դասագրքերում սովորաբար զետեղվում են ընթերցանության համար նախատեսված նյութերից հետո՝ պայմանավորված ստեղծագործության բովանդակությամբ, գաղափարով և ենթատեքստով:

2.2.Դատողական և գնահատողական խոսքի զարգացումը բառային աշխատանքների միջոցով

Կրտսեր դպրոցականների կողմից կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորումը բարդ աշխատանք է, որն իր մեջ ընդգրկում է լեզվի ուսուցման մեծ մասը՝ և՛ ընթերցանության դասերին սովորած, և՛ լեզվական նյութի ու ուղղագրության ընթացքում յուրացրած բառերն ու արտահայտությունները:

Բառային աշխատանքն իրականացվում է մի քանի իրար հաջորդող փուլերով՝

Բառային աշխատանք կարելի է իրականացնել դասի բոլոր փուլերում. խթանման փուլում ուսուցիչը խոսքի մեջ կարող է օգտագործել անծանոթ բառեր, որը բխում է նոր հանձնարարվող նյութից և դասի այդ հատվածում բացատրի տվյալ բառը:

Իմաստի ընկալման փուլում տարածված մեթոդ է բնագրից անծանոթ բառեր դուրս գրելը և դրանց հոմանիշները և հականիշները ներկայացնելը:

Կշռադատման փուլում կարելի է աշակերտներին հանձնարարել տվյալ բառերով կազմել բառակապակցություններ, նախադասություններ կամ փոխարինել համապատասխան հոմանիշ -հականիշներով:

Ներկայացնենք որոշակի առաջադրանքներ, որոնք ուղղված են բառային աշատանքների իրականացմանը և լեզվական նյութի յուրացմանը, և որոնք պարունակում են դատողականություն և գնահատողականություն:

1.Հետևյալ բառակապակցությունները պատասխանեք մեկ բառով՝ ի կարգին հարմարեցնելու համար:

- Գլխին դնել _____
- Գլխի ետևը տեսնել _____
- Ոտ ու ձեռից ընկնել _____
- Բանտարկյալ աստղի տակ ծնված _____
- Լեզվին բուն կտրել _____
- Թեյը հացի հետ ուտել _____

2.Մեկ բառով բնութագրեցեք բնությունն ի՞նչ է և համապատասխանեցնում է հետևյալ առած-ասացվածքներին:

Մրտավայ արտի փոքրիկ գոլորդ
Լավ է, բան թե շատ մեծ փորձը:
_____
Մա՛ր ինչ ինչ մտքի է, ասպրեր ինչ ինչ մտքի:
_____
Մատն արմատով է ծառ:
_____
Ոլորդին բուան մեջ ձվանող էլ անի, մոր
կրակոցիդի տակից չի կարող դուրս գալ:
_____

3. Մեկնաբանություններ տվեք գրքի գլխին գրված հրամանագրերն ունկնդիր ինչպես բառ և գրամեկով կարելի՞ է բառակապակցություններ և հարմարաբերություններ:

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____



4. Բնագրում բնաբան գրված բառերը փոխարինեք ի՞նչ համանիշներով:

Քեռիս ամենասով մի գյուղերի կոմերի կար: Նրա տեղը լավ էր, օդն ու լույսը առատ, իսկ շուրջն ամեն ինչ իրենց մեծ ընկերներին՝ կոմերիներն ու սոմիները: Մեր կոմերին շատ էր ուզում շատ մեծանալ, բա չէր հիշատակ ոչ չեկում արևը, ոչ գոմ տալ, ոչ գուտալի ջրերան երկիրներին, ուզեր, ուրախ-ուրախ իրար ձայն տալով, անասում մոր ու նրան էին հանգաստ: Մեծանիները լիքը լցնելով, պատուներն պատերի—պես բարակ ոտերին շարքով հրատեր կանգնում տակ եռում էին հանգստանալու և վիրա սառում.

— Ես ի՞նչ եմ ոչխատ հանեմ է: Որքա՞ն է գնալիքի է:

5. Դո՛ւք կրա գրքը բնագրում բնաբան գրված բառերը և գտե՛ք դրանք համանիշների ու հոմանիշների:

Գարնան, ուրախությամբ գարուն է: Մեր գյուղամեջ սարվեցին ծառերիկներ են: Երբեմնի ծառերիկներով, որոնց վրա պար էն բռնել, գաղտնիքներն թիթեռներն ու մրջյուններ մեղուները: Անուսաղ լցվել է հասարակը գիշատաբանած թռչունների անուշը: Հովերը ուռնում: Օրը լի է ծաղկած գեղեցիկներով. Գիրուանների շշմեցուցիչ բուրումներով: Էգերով պարար շրջում է ու Ինքնամոլ—վազքով սարվեցիրով, որոնք առատ բերք են խոստանում:

Բառերը	Հոմանիշները	Հոմանիշները

«Մայրենի 4- դասագրքի շրջանակներում կարելի է առաջարկել դասավանդման և գիտահետազոտական խնդիր գտաբանության պրոյեկտի առաջադրանքներ.

1. Գնահատեք ի՞նչ է նկարագրում ի՞նչ, թե՞ ի՞նչ բնագիտական գիտելիք եք ստանում մեջ:

Մտաբանեք նկարագրում:

2. Մեկնաբանեք բառերը և բառակապակցությունները մեկի վերագրելը և տանելի՞ ի՞նչ բառ բառեսանգնեցությունը:

1) «Նրան»
2) «Ինձնից լավ տուն»
3) «Գլխի դարդոց»
4) «Գրդեր»
5) «Ծառիկներ»
6) «Թռչունի մասամնեցրա»

3. Բովանդակի աշխատանք: Բովանդակի առաջադրանքներ ձևավորող նյութերը.

1) 1-ին խումբ - Ի՞նչ է սեռանանի մեջ ասված: Հիմնավորել պատասխանը:
2) 2-րդ խումբ - Եթե ձեզ տրվեի ինքը կատարել «Բանանանի մեջ ասված», ինչպիսի՞ն կլիներ այն: Հիմնավորել պատասխանը:
3) 3-րդ խումբ - Նկարագրեք ի՞նչ ձեր պատկերացրած «Բանանանի մեջ ասված» Հիմնավորեք:
4) 4-րդ խումբ -Ուզե՞ք կարդալ են գալուկ «Բանանանի մեջ ասված»-ից: Հիմնավորել պատասխանեք:

4. Գնահատեք ի՞նչ Մատանի Դաշի ինքնագրեր, ստանձնացրա՛ ուրախան և բաց տանան ֆոտոնկար:

_____
_____

5. Հետևյալ գրառումներից ինչպիսի՞ գրա՞ նե՞ նշանակությունները՝ «Մատանի Դաշի» գրաբանությունները:

1) Ոտ ուզի որ տանք, տարեք բուռ կրանք:

2) Ուրիշի համար փոս փորողը ինքն է ընկնում մեջը:
3) Որտեղ միտքն աշխատում է, գանձեր պիրտը հանգստանում է:
4) Ում առաջ մեջքդ ծռես, բան կդնի:
5) Լավ է մարուր պիրտ ունենաս, քան լիքը քսակ:

6. Ուրարաքանչյուր բնագիրը ուսումնասիրելուց հետո կարելի է նրանցներին ուշադիր հետևյալ հարցերն ու տանը հանձնարարել առաջադրանքներ.

ա. «Օրյանի հիմքը» ստեղծագործության մեջ ընտանիքի անդամներն ինչո՞ւ ընտրելին սերը: Ո՞րը կընտրեիք դուք: Մեկնաբանե՛ք պատասխանը:

բ. «Ուրդին բուան մեջ ձվանող էլ անի, մոր երախտիքի տակից չի կարող դուրս գալ»: Մեկնաբանի՞ր այս դատողության իմաստը: Ո՞ր ստեղծագործությամբ կհանգես այդ դատողությանը:

գ. Գրի՛ր նամակ անձնանոթին և նկարագրի՛ր հարազատներդ այնպես, որ հետաքրքրություն առաջացնես հարձնիկներդ կեսամանք:

դ. հասնդաստանալան դատողությունները՝ արդարացրա՛ «Ճարուն ու մրջյունը» առակի ճարտարն:

Ե. Անահիտի պահանջները չկատարելու դեպքում ի՞նչ կպատահեր Վեյսագանին:



ԳԼՈՒԽ 2.

«ՄԱՅՐԵՆԻ 4» ԴԱՍԱԳՐՔԻ ՆՅՈՒԹԵՐԸ ԻԲՐԵՎ ԴԱՏՈՂԱԿԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

3.1 Գնահատողական և դատողական խոսքի ձևավորումը «Մայրենի 4» դասագրքի նյութերի ուսումնասիրության ընթացքում

«Մայրենի 4» դասագրքերի բնագրերից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում կարելի է ձևավորել դատողական և գնահատողական խոսք: Այս խոսքի տեսակների ձևավորման և զարգացման համար կարևոր են որոշակի քայլեր.

1. Բնագրի՝ հասկանալով ընթերցումը:
2. Բնագրի տրամաբանորեն և հաջորդաբար վերլուծությունը:
3. Բնագրի հիմնական մտքի, ենթատեքստի հասկացումն ու կռահումը:

Բնագրի շուրջ աշխատելիս դատողական և գնահատող խոսքի կառուցման համար շահեկան է հետևել հետևյալ քայլերին՝

1. Յուրաքանչյուր **բնագրի գաղափարի բացահայտմանը**, որը կատարվում է աշակերտների կողմից բնագրի վերլուծության միջոցով:

Վերլուծելով բնագրի ընթացքը՝ աշակերտները կատարում են դատողություններ և գնահատում դեպքերի զարգացումը: Գաղափարի վերհանումը ենթադրում է հեղինակի մտքի ճիշտ ընկալումը և վերհանումը: Օրինակ՝ Ս. Մկրտչյանի «Թագավորն ու հողագործը»[1] ստեղծագործության ուսումնասիրման և գաղափարի վերհանման համար խթանման փուլում կարող ենք անցկացնել նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ, որից հետո նկարի բովանդակության միջոցով կանխագուշակել բնագրի բովանդակությունը:

Աշխատասեր մարդկանց հաճախ հանձնա-
տում են մեղուների ու մրջյունների հետ: Քանի որ դու
ոչ միայն աշխատասեր ես, այլև ընթերցասեր,
կարդա՛ այս առակը:

Միասին աշխատեք, միասին վայելեք,
հաշտ ու խաղաղ ապրեք:

ԱՍԱՏԵՊ ԱՂԱՄԱՍ.
ՑՈՒՐԵՆ ՈՐ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռչ-վրի մի ճարուտ,
Որջ ամառը շուռումուռ,
Երգեց, ճռռաց,
Ճռճռաց:
Մին էլ, ցիր՝, ձմեռը
Փռեց իր ցուրտ թևերը:
Բացեց գորգը ապիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:
Անցան պայծառ օրերը,
Էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րը,
Երբ ամեն մի թփի տակ
Թե՝ սեղան կար, թե՝ թթյակ՝:
Եկան օրեր ցուսաշունչ,
Ճարուն ընկավ լուռումունջ,
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք:
Շընչը-զընչը դողդղալով,
Ճանր-ծանր սողալով՝
Նա մրջուկին ասում է.
– Գլխի՞դ մատաղ, սանամե՛ր՝,
Մի ճա՛ր արա՝ շունչ առնեմ,
Ցուրից, սուլից չմեռնեմ.
Կերակրի՛ր, տաքացո՛ւ,
Մինչև գարուն սպասեցո՛ւ:
– Էս ի՞նչ բան է, սանի՛կս,
Հաղսանում ես, ջանի՛կս,
Դաշխատեցի՞ր ամառը,
Ասա՛ ի՞նչն էր պատճառը:
– Այդպես բանի, սանամե՛ր,
Էլ ժամանակ ո՞չ ուներ,
Այն խոտերում բուռավետ

Երգում էինք մեր-ոնց հետ:
– Ո՞ւրեմն՝ դո՞ւ...
– Այո՛, ե՛ս...
Որջ ամառը դեռ ու դեռ,
Երգում էի մշտապես:
– Երգո՞ւմ էիր... Շա՛տ բարի,
Այժմ էլ բանի՛ վերմերի՝,
Քաղին ծաղի տա, դու պարի՝:

89

Կշռադատման փուլը կարելի է կազմակերպել բնագրի վերջում հետևյալ առած-ասացվածքի քննարկմամբ՝

Աշխատանքը առաքինությունների աղբյուր է:

Քրտինքն աշխատանքի արդյունքն է:

2. Դատողական և գնահատող խոսքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի **բնագրում առկա կերպարների բացահայտումը և վերլուծումը**:

Բնագրի վերլուծության ընթացքում կերպարների ըմբռնումը, նրանց համեմատումը, զուգահեռների անցկացումը, նմանությունների և տարբերությունների գիտակցումը աշակերտներին հնարավորություն կտա գնահատել կերպարների թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը՝ նպաստելով գնահատողական խոսքի զարգացմանը:

[1] Դ.Գյուրջինյան և այլք, Մայրենի-4, Եր. Էդիթ Պրինտ, 2016, էջ 25-27:

Օրինակ՝ Աթաբեկ Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը»[2] ստեղծագործության ուսումնասիրության ընթացքում աշակերտներին կարելի է առաջարկել գնահատել հերոսների արարքները՝ առանձնացնելով երկու կողմերի դրական և բացասական գծերը:

Կշռադատման փուլում կարելի է հանձնարարել դուրս գրել նմանությունները և տարբերությունները երկու կերպարների միջև «Վենի դիագրամ» մեթոդի միջոցով: Ստեղծագործության յուրացման ընթացքում աշակերտներին կարելի է հանձնարարել դատողություններ կատարել հերոսներից յուրաքանչյուրի կատարած քայլերի վերաբերյալ և մեկնաբանել դրանց պատճառահետևանքային կապերը:

3. Տարրական դասարաններում հատկապես գերակշռում են ժողովրդական բանահյուսության տարրերից **առածներն ու ասացվածքները**, որոնք մեկ ամբողջ նախադասությամբ կարողանում են ամփոփել տվյալ ստեղծագործությունը:

Աշակերտները դատողություններ կատարելու միջոցով գալիս են այն եզրակացության, որ տվյալ առածը կամ ասացվածքը համապատասխանում է ստեղծագործության գաղափարին: Օրինակ՝ Գր. Գնունցի «Հայրս» (էջ 60) ստեղծագործության հիմնական գաղափարին համապատասխում է «Մարդը՝ մարդով, որդին՝ հորով» առածը, Ավետիք Իսահակյանի «Արջն ու օձը» (էջ 84) ստեղծագործությանը՝ «Օձն իր շապիկը կփոխի, բնույթը չի փոխի» առածը, Եզոպոսի «Առյուծն ու նապաստակը» (էջ 98) ստեղծագործությանը՝ «Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի » ասացվածքը և այլն:

Տարրական դասարաններում հաճախ կիրառվում են **դարձվածքներ**: Դարձվածքների գործածումը խոսքում հարստացնում է խոսքի արտահայտչականությունը և կոնկրետությունը. այդ պատճառով պետք է հետևել, որ աշակերտները իրենց դատողություններում, խոսքում, արտահայտվելիս բազմիցս օգտագործեն դարձվածքներ և ճիշտ գնահատեն դրանց իմաստը:

---

[2] Վ.Սարգսյան և այլք, Մայրենի-4, Եր. Մակմիլան-Արմենիա, 2009, էջ 89-91(այսուհետև բոլոր օրինակները բերված են նշված գրքից, մյուսների դեպքում կնշվեն էջերը):

4. Աշակերտների դատողական և գնահատողական խոսքի ձևավորմանը նպաստում են **հատկապես հարցադրումների և առաջադրանքների հանձնարարումը**:

Մինչ հարցին պատասխանելը կամ առաջադրանքի կատարմանն անցնելը աշակերտները պետք է դատողություններ կատարեն, գնահատեն հերոսների քայլերը, տրամաբանորեն դեպքերը կապեն իրար և պատասխանեն հարցադրմանը կամ բնագրի վերջում տրված առաջադրանքներին:

Այսպես՝ օրինակ՝ Գ. Սրվանձտյանի «Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ» (էջ 36) դյուցազներգության մեջ ներկայացված են հարցեր, որոնք աշակերտներին կստիպեն մտածել և դատողություններ անել ստեղծագործության վերաբերյալ: Հարցադրումների միջոցով յուրաքանչյուր հատվածից հետո աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջանում մյուս մասի վերաբերյալ: Հարցադրումները ուսուցիչը կարող է կատարել դասի բոլոր երեք փուլերում :

Մայրենիի չորրորդ դասարանի դասագրքում առկա են դատողական և գնահատողական բնույթի առաջադրանքներ, որոնք ներկայացված են տվյալ խոսքի տեսակների զարգացման համար: Օրինակ՝ Ա. Այվազյանի «Խայծը» (էջ 138) ստեղծագործությանը համապատասխան տրված է առաջադրանք՝

Այս դատողություններից ո՞րն է քեզ ավելի համոզիչ թվում. ընտրի՛ր և մեկնաբանի՛ր:

Որդն էլ, ձուկն էլ զոհ են:
Որդը գիտակցում է իր զոհ լինելը:
Ձուկը չի գիտակցում իր զոհ լինելը:
Որդի և ձկան վիճակը բնական է և օրինաչափ:
Որդը խղճում էր ձկանը, որովհետև ձուկն էլ իր նման զոհ էր:
Ամենավերջին պահին էլ որդն ուզում էր, որ ձուկը հասկանա իրեն:

Նույն ստեղծագործությանը վերաբերող նշված առաջադրանքը կնպաստի գնահատողական խոսքի զարգացմանը.

Համեմատի՛ր երկու ձկնիկ հերոսներին:



Մարդիկ երջանիկ են իրենց ընտանիքում: Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու...

Ձեզ համար նաև,
Իմ փի՛ր մանուկներ,
Հույս, հավատ ու Սեր:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ՕՋԱԽԻ ԴԻՄԸԸ

Հայաստանի հին գյուղերից մեկում տանտիկինն առավոտյան դուրս է գալիս տան չորս կողմը մաքրելու և տեսնում է, որ երեք ծերունի են կանգնած՝ երկար մորուքներով ու բարի դեմքերով:

– Հանեցե՛ք տուն, իրար կինեք,– դիմում է նա ծերունիներին:

– Բարի՛ տիրուհի, ամուսինդ տա՞նն է,– հարցնում են ծերունիները:

– Չէ՛, բայց դուք եկե՛ք, կիանգստանաք, կճաշեք, մինչև ամուսինս գա:

– Չէ՛, աղջի՛կ ջան, մենք կսպասենք, մինչև ամուսինդ գա:

Կինը ներս է մտնում, հարսի հետ տան գործերով զբաղվում ու մոռանում ծերունիների մասին:

Երեկոյան ամուսինը հոգնած վերադառնում է դաշտից: Երբ տեղան են գցում ճաշելու համար, կինը հիշում է, որ ծերունիները դեռ դրսում են:

– Ա՛յ մարդ,– ասում է,– առավոտվանից տան մոտ երեք ծերունիներ են կանգնած: Գրավիրեցի տուն, չեկան:

– Ա՛յ կնիկ, իրւրն Աստծունն է, հրավիրի՛ր, թող տո՛ւն գան:

Կինը դուրս է գալիս ու հրավիրում ծերունիներին՝ ասելով, որ ամուսինն արդեն տանն է: Սակայն ծերունիները կրկին չեն գալիս՝ ասելով, որ իրենցից մեկը կարող է ներս գալ, որ իրենք սրբեր են: Մեկը սերն է, մյուսը՝ հաջողությունը, երրորդը՝ հարստությունը:

- Ի՞նչ ես կարծում տանտերերն ո՞ւմ ներս կիրավիրեն: Իսկ դո՞՝...

Կինը վերադառնում է տուն ու ասում.

– Ա՛յ մարդ, ծերունիները սուրբ են, ու նրանցից ամեն մեկը մի բան է խորհրդանշում՝ հաջողություն, հարստություն, սեր: Նրանցից միայն մեկը կարող է գալ մեր տուն, եթե կանչենք:

51

5. Դատողական և գնահատողական խոսքի զարգացման համար առանցքային նշանակություն ունի նաև **կարդացած ստեղծագործության ենթատեքստի կռահման կարողությունը:**

Ենթատեքստի կռահման համար կարելի է աշակերտներին ուղղորդել նրանց ստեղծագործական մտածողության զարգացմանը: Ստեղծագործական մտածողությունը կնպաստի աշակերտների դատողական, գնահատողական, ինչպես նաև նկարագրական խոսքի զարգացմանը: Օրինակ՝ Պ. Սևակի «Քիչ ենք, բայց հայ ենք» (էջ 48) ստեղծագործությանը համապատասխան աշակերտներին կարելի է առաջարկել ստեղծագործական աշխատանք՝հետևյալ բովանդակությամբ՝

- Տեքստում նշված Արարատ, Սևան, բարձր, դարավոր, կանգուն, վսեմ, գեղեցիկ, վանք, ժայռ բառերով կազմի՛ր նկարագրական և գնահատողական բնույթի տեքստ և ներկայացրո՛ւ ընկերներիդ:[3]

6. **Ընթերցած ստեղծագործության վերարտադրումը կամ պատմումը**, թերևս գլխավորներից է, որը նպաստում է դատողական մտքի, ինչպես նաև գնահատելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը: Այս աշխատանքն աշակերտներին տալիս է վերլուծելու, համադրելու, հակադրելու և դատողություններ անելու մեծ հնարավորություն:

[3] Կ.Թորոսյան, Կ.Չիբուխչյան, Ա.Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը, Եր. Զանգակ 2018, էջ 106:

Այսպես՝ Ս. Վարդևանյանի «Օջախի հիմքը» (էջ 51) ստեղծագործության ընթերցումից հետո նպատակահարմար կլինի աշակերտներին առաջարկել պատմել տեքստը՝ հորինելով շարունակություն, ավելացնելով նոր հերոսներ: Այսպիսի աշխատանքը կօգնի ընդլայնելու աշակերտների երևակայությունը, կզարգացնի խոսքը:

Ամուսինը, որ ամբողջ կյանքում աշխատել էր ու որևէ բանի չէր հասել, ասում է.

– Մ՛ կնիկ, բախտը հագիվ իր ոտով մեր դուռն է եկել: Արի՛ հարստությունը կակչենք ու մի քիչ մարդավայել ապրենք:

Կինը թե՝

– Ավելի լավ չի՞ լինի հաջողությունը կանչենք. օտարության մեջ որդի ունենք:

– Թո՛ղ քո ասածը լինի,– համաձայնում է ամուսինը:

Իսկ հարսը խնդրում է.

– Հայրի՛ն, մայրի՛ն, ի՞նչ կլինի՝ սե՛րը կանչեք, թող սե՛րը գա:

Մարդ ու կին իրար են նայում, հարսին են նայում, ու կինը, դուրս գալով, դիմում է ծերունիներին.

– Մենք սերն ընտրեցինք, թող սե՛րը գա մեր տուն:

Ծերունիներից մեկն առաջ է գալիս, մյուս երկուսը՝ նույնպես:

– Ես սերը կանչեցի,– ասում է կինը:

– Սիրելինե՛ր,– ասաց ծերունիներից մեկը,– մի տեղ, որ սեր եղավ, այնտեղ հաջողությունն ու հարստությունն անպակաս կլինեն:

1. Մեմ տեսավ տանտիկինը տան մոտ: Ովքե՞ր էին նրանք:
2. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ի՞նչ էր ուզում և ինչո՞ւ: Կարդա՛ բնագրի համապատասխան տողերը:
3. Ընտանիքն ընտրեց սերը. ինչո՞ւ մտան բոլորը: Կա՞ հարցի պատասխանը վերջերերդի՞ բնագրից և մեկնաբանի՛ր:
4. Ինչո՞ւ հենց սկզբից ծերունիները չընդունեցին հրավերը:
5. Ցույցի՛ ինչո՞ւ է վերնագրված «Օջախի հիմքը»:

3.2. Փորձարարական աշխատանքի ընթացքը և արդյունքները

Փորձարարական աշխատանքը իրականացրել ենք Արարատի մարզի Նոր ուղու միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանում:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն համոզման, որ տարրական դասարաններում խոսքի տեսակների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները բավարար չեն, և ուսուցիչները պետք է մշակեն և ընտրեն այնպիսի աշխատանքներ, որոնց կիրառումը աշակերտների մեջ կձևավորի և կամրապնդի խոսքի տեսակների (դատողական և գնահատողական) ճիշտ կիրառումը՝ դրանք դարձնելով հմտություն:

Հետազոտության ընթացքում մենք կազմեցինք հարցաթերթիկներ՝ պարզելու, թե արդյոք աշակերտների խոսքը հարուստ է տվյալ խոսքի տեսակներով, կարողանո՞ւմ են կատարել դատողություններ, գնահատել դեպքերի ընթացքը և զարգացումը, թե՞ ուղղակի այդ դասերի ընթացքում լսել են ուսուցչին և անցել առաջ, արդյո՞ք բնագրերի ուսումնասիրումը նպաստել է կրտսեր դպրոցականի դատողական և գնահատողական խոսքի զարգացմանը:

Հարցաթերթիկներում ընդգրկեցինք անցած դասերից ընտրված հարցեր՝ կազմելով առաջադրանքներ, որոնց պատասխանների արդյունքներից կկարողանայինք հասկանալ աշակերտների զարգացման մակարդակը: Հարցաթերթիկը կազմել ենք մեկ ընդհանուր *թեմատիկ խմբի* վերաբերյալ՝ պարզելու համար՝ որքանով են աշակերտները կարողանում դատողություններ կատարել և հիշել ու գնահատել ստեղծագործությունների գլխավոր միտքը և գաղափարը: Ընտրեցինք «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» թեմատիկ խմբի ամփոփումը՝ ներառելով այնպիսի հարցեր, որոնք կպարունակեն թե՛ ճանաչողական, թե՛ մտածողական հարցեր, որպեսզի ստուգենք, թե որքանո՛վ են աշակերտները կարողանում ինքնուրույն դատողություններ կատարել և գնահատել շրջապատող իրականությունը:



ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 1

1. Ըստ քեզ՝ ի՞նչ է հրաշալիքը, և ինչո՞ւ է հայոց այբուբենը համարվում հրաշալիք:
2. Նշի՛ր Հ. Թումանյանի քեզ ծանոթ երկու ստեղծագործություն, որը վերաբերում է դպրոցին:
3. Քո պատկերացմամբ ի՞նչ է «ժամանակի մեքենան»:
4. Երեք նախադասությամբ բնութագրի՛ր Մ. Մարյանին:
5. Ի՞նչ գիտես Վ. Մամիկոնյանի մասին:
6. Քո կարծիքով՝ որո՞նք են հայ մարդու երազանքները:
7. Ովքե՞ր են իշխանները և արդյոք ճիշտ հրամաններ են տալիս:
8. Սասնա տան քառասուն տղամարդկանցից ո՞ւմ գիտես. գնահատի՛ր նրա դրական կողմերը:

Հարցաթերթիկների մեջ ընդգրկված հարցերը կազմված էին այնպիսի կարգով, որ աշակերտները հնարավորություն ունենային շարադրելու իրենց մտքերը, ազատ ներկայացնելու իրենց դատողությունները: Ներկայացնենք առաջին հարցաթերթիկը:

Հարցաթերթիկի վերլուծություն

Դասարանի 24 աշակերտներից հարցաթերթիկը լրացրին 16-ը:

+ կան դատողություններ, և առկա է գնահատողականություն

- չկան դատողություններ, և առկա չէ գնահատողականություն

± բոլորի կողմից տրված են նույն պատասխանները

Հարցեր	+	-	±
1-ին	3	6	7

2-րդ	4	6	6
3-րդ	3	6	7
4-րդ	4	11	1
5-րդ	5	6	5
6-րդ	5	6	5
7-րդ	4	10	2
8-րդ	3	6	7

Տոկոսային հարաբերությամբ հաշվելով և վերլուծելով դասարանի ընդհանուր տվյալները՝ ստացանք հետևյալ արդյունքները.



Հարցաթերթիկի լրացման կարգից հասկացանք, որ աշակերտներից շատերը տվել են նույն պատասխանները: Այսինքն՝ չկար ինքնուրույնություն, սեփական մտքի արտահայտում, սեփական դատողությունների և գնահատողականության հանգում: Պատասխաններում գերակշռում էին ոչ լրիվ տրված պատասխաններ, այսինքն՝ հարցին պատասխանել են ոչ ամբողջովին:

Արդյունքներից պարզ է դառնում, որ աշակերտներն ավելի ճիշտ են պատասխանել այն հարցերին, որոնք չեն պահանջում որևէ հերոսի արարքի գնահատում կամ դատողություններ: Քանի որ պարզ դարձավ, որ աշակերտների դատողական և գնահատողական ինքնուրույն խոսք կառուցելու կարողությունները բավարար չափով զարգացած չեն լայն թեմաների ամփոփման և ուսումնասիրության

ընթացքում, մենք կազմեցինք հարցաթերթիկներ նեղ թեմաների համար, որպեսզի յուրաքանչյուր բնագրի ուսումնասիրությունից հետո երեխաների ուշադրությունը բևեռենք նյութի գաղափարի ամբողջական ըմբռնմանը միտված հարցադրումներին՝ դրանով իսկ զարգացնելով տվյալ խոսքի տեսակների ձևավորումը:


Հարցաթերթիկ

1. Ո՞ւր էր ընկել Գուլիվերը:

2. Ի՞նչ եք հասկանում «Գլխով դրական շարժումներ էր անում»:

3. Հեղինակը ինչպե՞ս է հասկացնում, որ Գուլիվերը չափազանց քաղցած է:

Կա՞ տեքստում մի բան, որ ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:

4. Պատկերացրո՛ւ, որ դու Գուլիվերն ես. նկարագրի՛ր մարդուկներին և շարադրի՛ր տեքստի սեղմագիր Գուլիվերի տեսանկյունից:

Ընտրեցինք «Այս զարմանահրաշ մոլորակը» թեմատիկ խմբի՝«Խայծը», «Երբ մտքերը սառչում են օդում» և «Գուլիվերի ճանապարհորդությունը» ստեղծագործությունները: Յուրաքանչյուր ստեղծագործության ուսումնասիրությունից հետո աշակերտներին հանձնարարեցինք լրացնել տվյալ թեմային վերաբերող հարցաթերթիկ:


Հարցաթերթիկ 2

1. Ո՞ր ստեղծագործությունից է տվյալ նկարը:

2. Ի՞նչ է նշանակում խայծ:

3.Ձուկն ինչո՞ւ չէր հավատում որդին:

4.Որդը ե՞րբ խայծ դարձավ:

5.Ի՞նչ առաջ կամ ասացվածքով կգնահատես ստեղծագործությունը:

6.Այս դատողություններից ո՞րն է քեզ ավելի համոզիչ թվում. ընտրի՛ր և մեկնաբանի՛ր:

- Որդն էլ, ձուկն էլ զոհ են:
- Ձուկը չի գիտակցում իր զոհ լինելը:
- Որդը խղճում էր ձկանը, որովհետև ձուկն էլ իր նման զոհ էր:

Նախապատրաստական մասում տվեցինք «Խայծը» մեկնաբառի բացատրությունը, որպեսզի մեր հետագա աշխատանքների կատարումը լինի իմաստավորված: Բացատրելով վերնագրի նշանակությունը՝ աշակերտները մոտավոր պատկերացում կազմեցին, թե ինչի մասին կարող է լինել նոր նյութը:

Ստեղծագործության ուսումնասիրության ժամանակ՝ խթանման փուլի նախապատրաստական մասում, կիրառեցինք «բանալի բառեր» մեթոդական հնարը: Գրատախտակին գրեցինք նոր դասանյութից ընտրած հինգից վեց հենակետային բառեր (**ձուկ, ջուր, վտանգ, լողալ, ձկնորս, որդ**) և աշակերտներին հանձնարարեցինք՝ յուրաքանչյուրն իր զույգի հետ կանխատեսումներ անի, թե դասանյութը ի՛նչ թեմայի վերաբերյալ կարող է լինել, և այդ բառերը ինչպե՛ս են օգտագործված դասանյութի մեջ: Աշխատանքի համար տրամադրեցինք հինգ րոպե, որպեսզի կարողանան քննարկումներ անել և գրառումներ կատարել: Այս աշխատանքի կատարումը ենթադրում էր աշակերտների միասին մտածելու, կարծիքներ արտահայտելու, միմյանց կածիքը գնահատելու, միասին

դատողություններ կատարելու, ընդհանուր եզրահանգման գալու, մի հարցի շուրջ երկկողմանի կարծիքներ հնչեցնելու և դրանք ընդունելու կարողության ձևավորում:

Զույգերից հինգը, կարող ենք ասել, մոտեցել էին թեմային, սակայն հիմնական գաղափարական մտքին՝ ոչ:

Այս աշխատանքից հետո հանձնարարեցինք ընթերցել դասանյութը և տեսնել, թե որ զույգի կանխատեսումներն էին մոտ կամ համապատասխանում դասանյութի բովանդակությանը: Սա շարժեց աշակերտների հետաքրքրությունը:

Մինչ ընթերցելը աշակերտներին ներկայացրինք, որ կատարելու ենք «Կանգառներով ընթերցանություն», այսինքն՝ ընթերցելու ենք հատվածներով և յուրաքանչյուր հատված կարդալու ենք միասին և հատվածից առաջ անցնել չի կարելի: Յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո նախօրոք կազմել էինք հարցեր, որոնք տրվում էին աշակերտներին, և ընդհանուր քննարկման միջոցով նրանք էին բացահայտում հերոսներին, նրանց զգացմունքները, դատողությունների միջոցով գնահատում և բացահայտում էին հերոսների արարքները, ապրումները, յուրաքանչյուր հերոսի դրական, բացասական կողմերը, ընկալում ստեղծագործության հիմնական գաղափարը, համեմատում հերոսներին, տարբերակում դրական և բացասական գծերը, նմանությունները և տարբերությունները:

Հարցերը կազմել էինք այնպես, որ աշակերտները հարցին պատասխանելուց առաջ մտածեն և դեպքերի ընթացքը գնահատեն իրենց տեսանկյունից՝ ինքնուրույն դատողություններ անելով: Այս աշխատանքից հետո կատարեցինք բառային աշխատանք. գրատախտակին գրվեցին բառերը (կացարան, ցեղակից, լուսածեգ, խայծ) և տրվեցին դրանց բացատրությունները: Այս աշխատանքը աշակերտներին լավ ծանոթ էր, և նրանք կարողանում էին ինքնուրույն օգտվել գրքի վերջում գտնվող բառարանից և արագ գտնել տվյալ բառերի բացատրությունը՝ գրելով բառատետրում: Սակայն շատ աշակերտներ այս աշխատանքը կարող են կատարել մեխանիկորեն՝ առանց հասկանալու բառի բուն իմաստը: Այս խնդիրը կանխելու համար մենք ինքներս բացատրեցինք յուրաքանչյուր բառի նշանակությունը:

Իմաստի ընկալման երկրորդ փուլում առաջարկեցինք աշակերտներին կատարել «**Կրկնակի գրառումներով օրագիր**» մեթոդը: Աշակերտները այս մեթոդին ծանոթ չէին: Բացատրվեց, որ նման օրագիր ստեղծելու համար պետք է ուղղահայաց գծով երկու մասի բաժանել սպիտակ թուղթը (գրատախտակին գծեցինք նաև մենք): Ձախ կողմում պետք էր գրել իրենց համար բնագրի ամենատպավորիչ հատվածները կամ նախադասությունները, իսկ աջ կողմում՝ այդ հատվածի վերաբերյալ իրենց տպավորությունները, մտքերը, դատողությունները, մեկնաբանությունները. [4]

- Ինչի՞ մասին է այդ հատվածը,
- Ինչո՞ւ է նա այդ հատվածը կարևորում,
- Ի՞նչ է ուզում ասել այդ հատվածի մասին:

Աշխատանքի համար հանձնարարեցինք 10 րոպե:

Գրառումները կատարելուց հետո հանձնարարեցինք ընթերցել իրենց մեջբերած հատվածները և մեկնաբանությունները: Յուրաքանչյուր հատվածի շուրջ լսեցինք մի քանի աշակերտների կարծիքներ, համեմատեցինք, գտանք նմանությունները և տարբերությունները: Շատերի կարծիքները համընկնում էին, իսկ մի մասինը՝ տարբերվում իրենց ինքուրույնությամբ և մտքերի սրությամբ:

Այս մեթոդի շնորհիվ կարողացանք բնագրի միջոցով բացահայտել աշակերտների հետաքրքրությունները, նպաստել նրանց մտածողության զարգացմանը, դատողությունների կատարմանը և սեփական կարծիքի ձևավորմանը, անկաշկանդ արտահայտվելու կարողության զարգացմանը:

Հաջորդ փուլը իրականացրինք լեզվական գիտելիքների շուրջ: Ըստ ծրագրի՝ նախատեսված է ուսումնասիրել կոչականը: Բացատրեցինք կոչականի կիրառությունը, կետադրությունը և դիրքային կիրառությունը: Այս աշխատանքը ներկայացվեց պաստառների օգնությամբ: Կոչականի բացատրման համար օգտվեցինք նաև դասանյութից. բնագրում ներկայացված ձկնիկը հանդիսանում էր որպես կոչական: Այնուհետև առաջադրանքը իմաստավորեց աշակերտների

[4].Թորոսյան Կ. և այլք, Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Եր. Մակմիլան-Արմենիա, 2007, էջ 79-80

պատկերացումները: Այն կազմել էինք այնպես, որ աշակերտները կոչականներ տեսնեին նախադասությունների թե՛ սկզբում, թե՛ մեջտեղում, թե՛ վերջում: Այս աշխատանքի իրականացման համար ևս օգտագործեցինք պաստառ: Պաստառի վրա գրված էին նախադասություններ, որոնց վրա կոչականները բաց էին թողնված, իսկ մյուս գրատախտակին փակցված էին կոչականներ արտահայտող նկարներ: Աշակերտներն այդ նկարներից պետք է ընտրեին և տեղադրեին նախադասության մեջ այնպիսիները, որոնք համապատասխանում էին նախադասությանը: Աշխատանքը շատ արդյունավետ էր. այս մեթոդը օգնեց, որպեսզի աշակերտները պատկերացնեն կոչականի դերը նախադասության մեջ և կիրառումը խոսքում:

Կշռադատման փուլում անդրադարձ կատարեցինք բնագրին՝ «Անդրադարձ նկարազարդման» մեթոդի միջոցով: Փակցրինք թեմատիկ նկարը և հարցերի միջոցով (ստեղծագործության ո՞ր պահն է նկարազարդված, ընթերցի՛ր այն տողերը, որոնք համապատասխանում են նկարի բովանդակությանը, ըստ նկարազարդման՝ փորձի՛ր ներկայացնել պատմվածքը) վերլուծեցինք այն:

Այսպիսով՝ դասավարումն իրականացնելուց հետո երեխաներին բաժանեցինք հարցաթերթիկներ՝ ստուգելու նյութի յուրացման աստիճանն ու դատողական ու գնահատող խոսք կառուցելու կարողության ձևավորման հնարավորությունները:

Առաջին հարցաթերթիկի լրացմանը ներկա էին 15 աշակերտներ, որոնցից հարցերին լիարժեք պատասխանել էին 3-ը: Հարցերի պատասխանների

վերլուծությունից հասկացանք, որ աշակերտները դարձյալ կատարում են մեխանիկական աշխատանք, և պակասում է ինքնուրույնությունը, ինքնուրույն մտածելու կարողությունը թույլ է զարգացած, այսինքն՝ աշակերտները հարցերին պատասխանում են այնպես, ինչպես շարադրված է գրքում:


Հարցաթերթիկ 3

3. Ո՞ր ստեղծագործությունից է տվյալ նկարը:

4. Ե՞րբ և ինչպե՞ս էին սառչում մտքերը:

3.Կատարվածից ի՞նչ եզրակացրեց Ծով Ա. Ծուլը:

4. Ծով Ա. Ծուլն ինչո՞ւ անմիջապես չվերադարձավ Բնեռ: Մեկնաբանի՛ր:

5.Ի՞նչ ես կարծում՝ մտքերն իրո՞ք կարող են սառչել:

6. Ի՞նչ առած կամ ասացվածքով կգնահատես ստեղծագործությունը:

Երկրորդ թեմայի («Երբ մտքերը սառչում են օդում») դասավարմանը, նաև հարցաթերթիկի լրացմանը ներկա էին 13 աշակերտ, որոնցից հարցմանը լիարժեք պատասխանել էին 6-ը: Երկրորդ հարցաթերթիկի լրացմանը ևս շատ քիչ թվով աշակերտներ էին կարողանում ինքնուրույն դատողություններ կատարել, սակայն արդյունքն ավելի գոհացուցիչ էր, քան առաջինինը:

3.3.Դասավանդման մեր փորձից

Դասարան՝ 4-րդ

Առարկան՝ Մայրենի

Դասագիրքը՝ «**Մայրենի 4**», հեղինակներ՝ Վ. Սարգսյան և ուրիշներ:

Թեմատիկ խումբ՝ «Այս զարմանահրաշ մոլորակը»

Դասի թեման՝ Ջոնաթան Սվիֆթ «Գուլիվերի ճանապարհորդությունը» , Կոչական

Դասի տեսակը՝ Ամրապնդման դաս

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասը վարում ենք ԽԻԿ համակարգով

Ուսումնասիրվող ստեղծագործության գաղափարը՝ **«**Ամեն փորձություն մի խրատ է**»:**

Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝

- « Հարց ու պատասխան»

- « Խմբային աշխատանք»
- « 5-րոպեանոց շարադրանք»

Անհրաժեշտ նյութեր՝

- Պաստառներ՝ կոչականի վերաբերյալ:
- Պաստառ՝«Ցանկությունների արահետ» վերնագրով:
- Գունավոր թղթեր:

Դասի նպատակները և խնդիրները՝

1.Ուսումնական՝

- Արտահայտիչ կարդալու, կապակցված խոսք կառուցելու, կարծիքներ և մտքեր ազատ արտահայտելու կարողության ձևավորում:
- Կարողանալ բանավոր վերարտադրել տեքստը:
- Աշակերտների բառապաշարի հարստացում և ակտիվացում:
- Բացահայտել հեղինակի մտադրությունը՝ բարձրանցելով բնագրի ենթաշերտերը:
- Կարողանալ դատողություններ կատարել և իրար կապել դեպքերի ընթացքը:
- «Կոչական» խոսքի մասի ընկալում և կիրառում:

2.Դաստիարակչական՝

- Միմյանց լսելու կարողություն
- Գնահատելու կարողություն

3.Զարգացնող՝

- Զարգացնել ստեղծագործական կարողությունները:
- Զարգացնել երևակայությունը:

Դասի ավարտին աշակերտները պետք է.

Իմանան՝

- կոչականի բնութագիրը,
- տարբերակել կոչականը նախադասության մեջ:

Կարողանան՝

- որոշել ուսումնասիրվող ստեղծագործության գաղափարը, կերպարների գործողությունների տրամաբանական հաջորդականությունը,
- հասկանալ հերոսների զգայական վիճակը,
- կազմել նախադասություններ՝ օգտագործելով կոչականներ,
- տարբերակել կոչականը նախադասության մեջ,
- Վերարտադրել և վերլուծել բնագրիրը:

Տիրապետեն՝

- Հասկանալով կարդալու կարողությանը:

Դասի ընթացքը՝

1. **Դասի սկիզբ - խթանման փուլ** (10 րոպե)

Մենք գրատախտակին փակցնում ենք «Ցանկությունների արահետ» վերնագիրը կրող պաստառը և աշակերտներին հանձնարարում գունավոր թղթերից պատրաստված մեքենաների վրա գրել.

- Ճանապարհորդել են արդյո՞ք, եթե այո՝ որտե՞ղ են եղել:
- Ո՞ւր կցանկանային ճանապարհորդել և ինչո՞ւ:

Մենք, լսելով նրանց, առաջարկում ենք ցանկությունները փակցնել պաստառին: Այս ամենից հետո հանձնարարում ենք կարդալ բնագիրը:

2. **Նոր նյութի ներկայացում - իմաստի ընկալման փուլ** (30 րոպե)

Աշակերտներին հանձնարարում ենք շարունակելով ընթերցել բնագիրը և պատասխանել հարցերին, որպեսզի կատարեին դատողություններ և գնահատեին յուրաքանչյուր հատվածի իմաստը:

1. Ո՞ւր էր ընկել Գուլիվերը:
2. Ինչպե՞ս ընդունեցին Գուլիվերին մարդուկները:

3. Ի՞նչը զարմացրեց Գուլիվերին:
4. Գուլիվերն ինչո՞ւ որոշեց անշարժ պառկել միչև գիշեր:
5. Գուլիվերն ինչպե՞ս հասկացրեց մարդուկներին, որ քաղցած է:
6. Մարդուկներն ինչո՞ւ էին ուզում քնեցնել Գուլիվերին:

Բառային աշխատանք

Աշակերտներին հանձնարարում ենք նորածանոթ բառերը բացատրել, տալ հոմանիշները և այդ բառերը օգտագործել նախադասությունների մեջ:

	Հոմանիշ	Նախադասություն
Կապարճ	Նետաման	
Կապանք	Կապ, շղթա, թոկ, արգելք	
Տախտակամած	Տախտակահատակ	
Տարափ	Անձրև, հեղեղ, տեղատարափ	
Նվաղել	Թուլանալ, տկարանալ, ուժասպառ լինել:	

Ապա իրականացնում ենք ընտրովի ընթերցանություն.

1. Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ այն հատվածը, որտեղ հեղինակը նկարագրում է մատնաչափիկ արարածներին:
2. Կարդա՛ այն հատվածը, որտեղից կարելի է կռահել, թե ինչպիսի՛ն է Գուլիվերը:
3. Գտե՛ք այն տողերը, որտեղ ներկայացվում է մարդուկների վախը:
4. Գտե՛ք այն տողերը, որտեղ ներկայացվում է Գուլիվերի վախը:
5. Կարդացե՛ք այն հատվածը, որն առաջացնում է հրճվանք:

3. Գործնական աշխատանք - խմբային աշխատանք

Դասարանը բաժանեցինք երեք խմբի. յուրաքանչյուր խմբին տրվեց բնագրից մի հատված (բնագիրը ևս բաժանեցինք երեք հատվածի) և հանձնարարվեց

յուրաքանչյուրին իր հատվածը վերնագրել: Առաջին խմբին հանձնարարվեց մինչև «Գուլիվերը երկար պառկած մնաց մեջքի վրա» հատվածը, երկրորդ խմբին հանձնարարվեց մինչև «Ճառ ասողը հասկացավ Գուլիվերին» հատվածը, իսկ երրորդ խմբին՝ մինչև ստեղծագործության վերջը: Այս վերնագրերը պետք է աշակերտներին ուղղորդեին, որպեսզի հաջորդ դասաժամին նախապատրաստվեն պատմելուն:

Խմբային աշխատանքի ավարտից հետո խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը:

Աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ

Վերհիշել կոչականի կիրառությունը և կետադրությունը նախադասությունների մեջ:

Գրատախտակին կատարել գրքի 7-րդ վարժությունը:
Այս նախադասություններում գտի՛ր կոչականները և գրի՛ր:

1. Ինչ կլինի, ասա՛, գրի՛չ, ինձ էլ սիրես գոնե մի քիչ:
2. Կո՛ւժ քե՛զ ասեմ, կուլա՛, դո՛ւ լսիր:
3. Արև՛, Արև՛, ե՛կ, ե՛կ, զիզի քարին վե՛ր եկ:
4. Ծիտի՛կ, ծիտի՛կ, մո՛տ արի:
5. Արհեստը, Վաչագա՛ն, կաթ-կաթ աղբյուր է:

4. Ինքնուրույն աշխատանք

Կիրառեցինք «5-բոպեանոց շարադրանք» մեթոդը: Աշակերտներին հանձնարարեցինք մի քանի նախադասությամբ գրել, թե ի՛նչ կանեին, եթե իրենք լինեին Գուլիվերի փոխարեն:

5. Դասի ավարտ

Դասն ավարտեցինք հետևյալ հարցադրումներով.

1. Ի՞նչ առած կամ ասացվածքով կգնահատեք ստեղծագործությունը:
2. Հեղինակը ի՞նչ էր ուզում մեզ հասցնել այս ստեղծագործությամբ:

Տնային հանձնարարություն:

«Գուլիվերի ճանապարհորդությունը» դասին, նաև հարցաթերթիկի լրացմանը ներկա էին 16 աշակերտ, որոնցից հարցմանը լիարժեք պատասխանել էին 9-ը: Արդյունքի մակարդակը ակնհայտորեն բարձրացել էր:



Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ գնալով արդյունքները լավանում են, այսինքն՝ մեր կատարած աշխատանքի ընթացքում երեխաների ինքնուրույն դատողություններ կատարելու և գնահատողականություն արտահայտելու մակարդակը բարձրանում է, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր բնագրի շուրջ հետևողական աշխատանք կատարելու արդյունքում (հարցախույզ, առաջադրանք-վարժություններ, երկխոսություններ և այլն), նրանց ուշադրությունը կարևոր հարցերի շուրջ բևեռելու, տարաբնույթ աշխատանքներ կատարելու դեպքում արդյունքը կլինի ակնհայտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Դատողական և գնահատողական խոսք կառուցելու կարողության ձևավորումը «Մայրենի 4» դասագրքի նյութերի միջոցով» մագիստրոսական ատենախոսությանը վերաբերող գրականության ուսումնասիրությունը, ինչպես նաև մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Ներկայումս տարրական դպրոցում մայրենիի կարևոր խնդիրներից մեկն էլ դասանյութի շուրջ աշխատանքի ընթացքում խոսքի տեսակների, հատկապես՝ դատողական և գնահատողական խոսք կառուցելու կարողության ձևավորումն է:
2. «Մայրենի 4» դասագրքի նյութերի ուսումնասիրության ընթացքում դատողական և գնահատողական խոսքի կարողության ձևավորման խնդիրների արդյունավետ լուծումը կախված է համապատասխան վարժությունների և առաջադրանքների կատարումից, աշակերտների մշտական հաղորդակցումից, ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքների կատարումից:
3. Դատողական և գնահատողական խոսք կառուցելու կարողության ձևավորման հիմնական միջոցը բանավոր խոսքն է, որը պետք է զարգացնել ընթերցանության, պատմելու, զրույցների, բառային աշխատանքների, ճիշտ վերլուծություններ կատարելու միջոցով՝ սեփական մտքերն ու գաղափարները, կարծիքը ձևակերպելու և հաղորդելու, կարդացածը հասկանալու առումով:
4. «Մայրենի 4» դասագրքի նյութերի ուսումնասիրությունը երեխաների գնահատողական և դատողական խոսքի ձևավորման համար մեծ հնարավորություններ է ընձեռում. բնագրերը հնարավորություն են տալիս վերլուծական, պատմողական խոսքի, դատողությունների կատարման, գնահատման և այլ որակների ձևավորման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Հայպետուսմանկ հրատ., Եր., 1963:
2. Բրուտյան Դ. Ա. , Տրամաբանություն, Եր., ՀՀ ԳԱԱ, Գիտություն, 1998:
3. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենի լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015:
4. Գյուլամիրյան Ջ. Խոսքի զարգացում, Եր., Զանգակ, 2014:
5. Գյուրջինյան Դ. և այլք, Մայրենի-4, Եր. Էդիթ Պրինտ, 2016:
6. Սարգսյան Վ. և այլք, Մայրենի-4, Եր. Մակմիլան-Արմենիա, 2009:
7. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը, Եր. Զանգակ, 2018:
8. Թորոսյան Կ. և այլք, Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Եր. Մակմիլան-Արմենիա, 2007:
9. Խարազյան Ռ. Փ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Երևան, 2003:
10. Կուրեղյան Է. Ա., Փիլիսոփայություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, Ճարտարագետ, 2004:
11. Մանդինյան Ա., Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար, Թիֆլիս, 1876:
12. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1980:
13. Мельникова Е. Н. Средства выражения эмоционально-оценочных высказываний в немецкой диалогической речи // Молодой ученый. 2014:
14. http://fantan.schoolsite.am/wpcontent/uploads/sites/1094/2017/01/%D4%B7%D5%AC%D5%AB%D5%A6%D5%A2%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%86%D5%BE%D5%A5%D6%80.pdf:
15. https://lib.mskh.am/images/books/Andersen_Erevnin.pdf
16. http://chekhov.am/html/arajadranqner/tarakan/2_teladrutyunner.pdf